ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

19.07.2013թ.
204-ի 1

ՀՀ ԿԱ Պետական եկամուտների
կոմիտեի նախագահ
պարոն Գագիկ Խաչատրյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Խաչատրյան,

Արդեն 2 օր է (17.07.2013թ.-18.07.2013թ.) Երեւան Սիթի սուպերմարկետից գնումներ կատարելիս մեզ տրամադրում են ՀԴՄ կտրոն, որը նման չէ այլ խանութներում տրամադրվող ՀԴՄ-ներին եւ չունի "Շահող կտրոն" վիճակախաղին մասնակցելու համար անհրաժեշտ ութանիշ թիվը: ՊԵԿ-ի թեժ գծից Ինֆորմացիայի ազատության կենտրոնի աշխատակցին հայտնեցին, որ նման ՀԴՄ-ներ այսուհետ տրամադրելու են մեծ խանութները, այդ թվում՝ սուպերմարկետները, իսկ "Շահող կտրոն" վիճակախաղին մասնակցելու համար անհրաժեշտ թիվ այս նոր նմուշի ՀԴՄ-ների վրա առկա կլինի 2013թ.-ի օգոստոսի 1-ից: Ստացվում է, որ ՀԴՄ-ներն արդեն գործարկվում են, սակայն վիճակախաղին մասնակցելու թիվը դրանց վրա առկա կլինի օգոստոսի 1-ից: Արդյունքում, այս ընթացքում որոշ խանութներից (սուպերմարկետներից) գնումներ կատարած բազմաթիվ քաղաքացիներ զրկված կլինեն իրենց ստացած ՀԴՄ-ներով վիճակախաղին մասնակցելու հնարավորությունից, ինչն անհավասար պայմաններ է ստեղծում տարբեր խանութներից գնումներ կատարող քաղաքացիների համար եւ հանգեցնում է պետության կողմից խտրական վերաբերմունքի՝ մինչեւ 01.08.2013թ.-ն ընկած երկշաբաթյա ժամանակահատվածում տարբեր խանութներից նույնանման գնում կատարելու դեպքում ոմանց տալով վիճակախաղին մասնակցելու հնարավորություն, ոմանց՝ ոչ:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ պատճառով են փոխվում խոշոր խանութների ՀԴՄ կտրոնները,
2. Ինչու՞ է նոր նմուշի ՀԴՄ-ների գործարկումը սկսվել շուրջ երկու շաբաթով ավելի շուտ, քան դրանք վիճակախաղին մասնակցելու թվով ապահովելու ժամկետն է՝ 2013թ.-ի օգոստոսի 1-ը,
3. Ի՞նչ իրավական հիմքերով, իրավական ակտերով է ապահովված այս գործընթացը,
4. Խնդրում ենք նաեւ տրամադրել այդ իրավական ակտերի պատճենները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան